ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Մեր թերթի վերջին համարներում ներկայացրինք պահանջները այն դիմումի, որ Ամերիկայի Հայ Ազգային Կոմիտէն արել է Սանֆրանցիսկոյի Համաժողովին նրա բացման օրերին։

Ամբողջովին համակիր այդ դիմումով առաջադրած պահանջներին, Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Գործադիր մարմինը, հետեւեալ դիմումն է կատարել Ամերիկեան «Պորտի» արտաքին առաքելութեան քարտուղար Դր. Ֆրեդ Ֆ. Գուդսելին Բոստոնում եւ խնդրել է միջնորդել Մ. Նահանգների կառավարութեան մօտ, որ Սան—Ֆրանցիսկոյի համաժողովում պաշտպանի հայկական Դատը։

Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան Գործադիր Մարմինը Փրավիտէնսի Եփրատ Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ նկատի առաւ իրեն յատուկ եկեղեցական և միսիոնարական հարցեր և այդ հարցերու կապակցութեանց բերումով՝ նաև Ապրիլ 25-ին Սանֆրանսիսկոյի մէջ գումարուելիք Միացեալ Ազգերու Խորհրդաժողովի պարագան։

Մենք բնականաբար, խորապէս վրդովուած սրտով ու հոգիով նկատի առինք մեր դեռ իր լուծումը չգտած Հայկական Դատը։ Մենք ամէնքս ալ Թրքական Հայաստանէն կուգանք. մենք ամէնքս ալ անխնայ ենթարկուեցանք Թրքական բարբարոսութեանց և մեր ցեղին մնացորդները ցան ու ցրիւ եղան աշխարհի ամէն կողմ։

Կենդանի կերպով կը յիշենք, թէ ինչպէս Թուրքիոյ մէջ գտնուած հայերը կը ջանային յառաջ տանիլ իրենց կրօնական ու մշակութային գործը այդ երկրին ամէն կողմ հաստատուած Ամերիկեան Պորտի Արտաքին Առաքելութեան ձեռքով։ Բառեր կը պակսին մեզի արտայայտելու մեր խորունկ վիշտը, որ ոչ այդ հաստատութիւնները և ոչ ալ անմեղ հայ ազգաբնակութիւնը գոյութիւն ունին այսօր Թուրքիոյ մէջ։ Ատոնք բոլորը քանդուեցան և այրեր, կիներ ու մանուկներ անգթօրէն կոտորուեցան Թուրքերուն ձեռքով։ Հայերուս հանդէպ Թուրքերու ցոյց տուած անմարդկային գազանութիւնները ամենասեւ էջը կը կազմեն մարդկային պատմութեան։

Մենք համոզուած ենք, որ եթէ արդարութիւն եղած ըլլար հայ ժողովրդին, ներկայ աննախընթաց պատերազմը պիտի խնայուէր մարդկութեան։ Ու խիստ վրդովեցուցիչ է տեսնել, որ այսօր բարբարոս Թուրքերը դրուած են քաղաքակիրթ ազգերու շարքին և իրենց ի գործ դրած բոլոր գազանութիւնները, որոնք մինչև երկինք բարձրացած են, ներուած մոռցուած են։ Մենք կը հաւատանք, թէ տիեզերքի Արարիչը արդար Դատաւոր է. Անիկա պիտի չներէ այդ անարդարութիւնը. և ոևէ մէկը, որ չտեսնել ձևացնէ այդ անարդարութիւնը՝ ինքը մեղսակից կ'ըլլայ անոր։ Ու օր մը պատասխանատու պիտի բռնուի այդ արդար Դատաւորին առջև։ Հայերու անմեղ արիւնին ձայնը տակաւին կաղաղակէ դէպի երկինքը՝ արդարութեան ի խնդիր։ Սակայն այդ արդարութիւնը պիտի գործադրուի մարդկային միջոցներով։

Հետևապէս, այսպիսի պատեհ առիթով մենք ձեզի կը դիմենք, իբրև մեր իրական բարեկամներ, որպէս զի դուք իբրև քրիստոնեաներ, ձեր ազդեցութիւնը ի գործ դնէք Միացեալ Նահանգաց կառավարութեան մօտ՝ արդարութիւն ընելու հայերուն, որոնք 200,000-է աւելի զինուորներով և քառասունէ աւելի գեներալներով ու զօրականներով բերին իրենց անվերապահ մասնակցութիւնը ու տուին իրենց արիւնի տուրքը հասարակաց թշնամին պարտութեան մատնելու մեծ գործին, օգնելով Միացեալ միւս ազգերուն՝ կցելու Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան՝ Արևելեան Թուրքիոյ այն մասնաւոր հողամասը, որ հիմնապէս հայկական է, որպէսզի հայ ժողովրդի թափառական մնացորդները տեղ մը ունենան ապրելու իրենց նախահայրերու հողին վրայ։

Մարդկութեան ու արդարութեան անունով է, որ մենք կը դիմենք Ամերիկեան Պորտի Արտաքին Առաքելութեան, որպէսզի ան ամերիկեան ներկայացուցիչներուն միջոցաւ այդ դիմումը կատարէ Ապրիլ 25-ին Սանֆրանսիսկոյի գումարուելիք Խորհրդաժողովին։

Ջերմ յարգանօք ի դիմաց Ամերիկահայ Աւ. Միութ.

Նախագահ՝ Յակոբ Մ. Տէփոյեան

Քարտուղար՝ Արուէն Ա. Կէօրկիզեան

ALIQ | July 25, 1945